

## **Ի՞նչ ՍՇՄԿ ԹՅՈՒՆՆԵՐ ԿՐՆՆԱՆ ԵՆՔ ԿՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՎ ԿՐԱՄԱՆԱԳԻՐ ԿՐԱՄԱՆԱԳԻՐ ԿՐԱՄԱՆԱԳԻՐ**

Հարգելի՛ Հաճախորդ, խնդրում ենք հանգամանորեն ծանոթանալ ստորև նշված բոլոր պայմաններին, որոնք կարգավորում են Վարկային Քարտերի տրամադրման հետ կապված Ձեր և ՎՏԲ-Հայաստան Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները: Խնդրում ենք պահպանել սույն կանոնները (այսուհետ՝ «Կանոններ») և դրանց բոլոր փոփոխություններն ու լրացումները: Տեղեկացնում ենք, որ Վարկային Քարտերի տրամադրման և սպասարկման դիմաց գանձվող վճարները սահմանվում են Բանկի Տնօրինության կողմից հաստատված պայմաններով և սակագներով (այսուհետ՝ «Պայմաններ»), որոնք համարվում են սույն Կանոնների անբաժանելի մասը:

### **Ըստ Կանոնների՝**

“Քարտապան”, “Դուք”, “Ձեր” և “Ձեզ” բառերը վերաբերում են “ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲԸ-ի կողմից թողարկված Վարկային Քարտեր օգտագործող ֆիզիկական անձանց:

“ՎՏԲ-Հայաստան Բանկ”, “Բանկ”, “Մենք”, “Մեր” և “Մեզ” բառերը վերաբերում են “ՎՏԲ-Հայաստան Բանկ” փակ բաժնետիրական ընկերությանը:

### **1. Քարտի տրամադրում**

1.1 Մեր և Ձեր միջև Քարտի տրամադրման և օգտագործման պայմանագիրը համարվում է կնքված այն պահից, երբ Բանկի կողմից Վարկային Քարտի տրամադրման դրական որոշում կայացնելուց հետո Ձեր և Բանկի միջև կնքվում է վարկային գծի տրամադրման պայմանագիր:

1.2 Մենք իրավունք ունենք փոփոխել սույն Կանոնները և պայմանները՝ Ձեզ տեղեկացնելով նախատեսվող փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ՝ տեղեկացնելով Ձեզ այդ մասին պայմանագրի մեջ Ձեր կողմից նշված եղանակով: Եթե փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Դուք շարունակում եք օգտվել Քարտից, Մենք կհամարենք, որ Դուք ընդունել եք փոփոխությունները:

1.3 Դուք իրավունք ունեք գրավոր դիմել Բանկին՝ պահանջելով վաղաժամկետ լուծել պայմանագիրը և փակել վարկային սահմանաչափը՝ միաժամանակ մարելով Բանկի նկատմամբ Ձեր պարտավորությունները կամ ապահովելով նվազագույնը Բանկի նկատմամբ նշված քարտի գծով Ձեր ունեցած պարտավորությունների չափով դրական մնացորդ: Ձեր կողմից լրացրած դիմումը (Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան) ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Մենք կդադարեցնենք Ձեր Քարտի սպասարկումը՝ Բանկում Ձեր հաշիվներին առկա գումարից մարելով Բանկի հանդեպ Ձեր պարտավորությունները: Պարտավորությունների մարման համար Ձեր հաշիվներին բավարար միջոցների բացակայության դեպքում, Քարտի սպասարկումը չի դադարեցվի, մինչ Ձեր կողմից ամբողջությամբ չկատարվեն պայմանագրով նախատեսված պարտավորությունները: Այս դեպքում Ձեր քարտի նկատմամբ կարող են կիրառվել Սակագներով սահմանված վճարները:

Քարտի գործողությունը դադարեցնելուց Ձեր քարտային հաշիվը կփակվի, իսկ քարտային հաշվին առկա միջոցները կփոխանցվեն Ձեր բանկում առկա այլ հաշիվներին կամ կտրամադրվեն Ձեզ՝ Ձեր նախընտրած եղանակով:

1.4 Մենք իրավունք ունենք միակողմանի, առանց Ձեզ ծանուցելու լուծել պայմանագիրը և ոչնչացնել Ձեր Քարտը, եթե Դուք չեք ներկայացել այն ստանալու համար Քարտը վերցնելու մասին Ձեզ տեղեկացնելու օրվան հաջորդող 180 օրացուցային օրերի ընթացքում:

## 2. Քարտի օգտագործում

2.1 Քարտերը կարող եք օգտագործել ՀՀ և արտերկրյա այն առևտրի/ սպասարկման և կանխիկացման կետերում, որոնց վրա առկա է VISA և Mastercard (կախված քարտի վճարային համակարգից) լոգոտիպը, ինչպես նաև ինտերնետ միջավայրում:

Մեր Քարտերը հնարավորություն են ընձեռում.

- կատարել անկանխիկ վճարումներ, գործարքներ ինտերնետ միջավայրում և/կամ կանխիկ գումարներ ստանալ բանկոմատներով (ATM),
- Քարտից Քարտ փոխանցումներ իրականացնել Բանկի բոլոր բանկոմատների և Մոբայլ Բանկինգ հեռախոսային հավելվածի միջոցով,
- կանխիկ գումարներ ստանալ Բանկում տեղադրված էլեկտրոնային տերմինալների միջոցով (point of sale (POS) terminal),
- անկանխիկ վճարումներ իրականացնել առևտրի/սպասարկման կետերում տեղադրված էլեկտրոնային տերմինալների միջոցով, քարտային հաշվով կանխիկ և անկանխիկ գործարքներ իրականացնել Բանկի տարածքում՝ առանց Քարտի կիրառման,
- համարել քարտային հաշիվը Բանկի CASH-IN բանկոմատների և վճարային տերմինալների միջոցով, վճարումներ և փոխանցումներ իրականացնել նաև ինտերնետի միջոցով:

2.2 Քարտը համարվում է Մեր սեփականությունը և Ձեզ է տրամադրվում օգտագործման իրավունքով: Քարտի գործողության ժամկետը սահմանվում է պայմանագրին կից Պայմանների համաձայն և նշված է Ձեր քարտի վրա՝ ամիս (մինչև տվյալ ամսվա վերջին օրացուցային օրը), տարեթիվ սկզբունքով: Քարտերը տրամադրվում են լրացված պայմանագիրը Մեզ ներկայացնելու պահից առավելագույնը 5 բանկային օրվա ընթացքում:

2.3 Քարտը ստանալուն պես Դուք պետք է ստորագրեք Քարտի դարձերեսին առկա ստորագրության համար նախատեսված դաշտում: Քարտով կատարվող գործարքների արդյունքում Ձեզ տրամադրվող անդորրագրերի վրա դրվող ստորագրությունը պետք է համապատասխանի Քարտի վրա առկա ստորագրությանը: Անհամապատասխանությունը հիմք է հանդիսանում Քարտի սպասարկումը մերժելու համար:

2.4 Քարտի վրա նշված գործողության ժամկետի ավարտից հետո Դուք պարտավոր եք Քարտը վերադարձնել Բանկ կամ ոչնչացնել այն՝ Քարտի մագնիսական ժապավենը և/կամ չիպը երկու մասի բաժանելով:

2.5 Քարտի հետ մեկտեղ, փակ ծրարով Ձեզ է տրամադրվում Քարտի ծածկագիրը (PIN), որը կիրառվում է Ձեր անձը նույնականացնելու համար բանկոմատներում և որոշ առևտրի/սպասարկման կետերում գործարքներ կատարելիս: Ծածկագիրը ենթակա չէ հրապարակման կամ տրամադրման երրորդ անձանց: Հարկավոր է ուշադիր լինել ծածկագիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ շարունակաբար սխալ մուտքագրելու դեպքում Քարտն արգելափակվում է և արգելահանվում է միայն Ձեր գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որի դիմաց գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված վճարներ:

Դուք կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր PIN-ծածկագիրը Բանկի ցանկացած բանկոմատի միջոցով: Քարտի PIN-ծածկագիրը Դուք կարող եք փոխել ինքնուրույնաբար Բանկի ցանկացած բանկոմատում քարտի առաջին իսկ մուտքագրման պահին հետևյալ սկզբունքով.

- քարտը մուտքագրել Բանկի ցանկացած բանկոմատ,
- էկրանին մուտքագրել Ձեր PIN-ծածկագիրը,
- այնուհետև մուտքագրել Ձեր կողմից ինքնուրույնաբար որոշված քառանիշ PIN-ծածկագիր,
- հաստատել PIN-ծածկագիրը և ավարտել գործարքը կամ իրականացնել բանկոմատով հասանելի այլ գործարք:

2.6 Դուք պարտավորվում եք միջոցներ ձեռնարկել Ձեր Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու համար: Խորհուրդ է տրվում առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերել ծածկագրի մուտքագրում պահանջող գործառնությունների նկատմամբ, քանի որ դրանց համար պատասխանատվությունը կրում եք միայն Դուք: Քարտի օգտագործման անվտանգությունն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում.

ա) Քարտը պահպանել ապահով վայրում այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Քարտը մի պահեք էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսներ, հեռուստացույցներ և այլ էլեկտրական տեխնիկա) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ:

բ) Ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին: Խնդրում ենք հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում:

գ) Չպատասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել Ձեր ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի հակառակ երեսին առկա եռանիշ թվանշանները (CW2 կոդը):

դ) Եթե ինտերնետի միջոցով գործարք կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվել գործարքից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներով և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներով գործարքներ կատարելու համար, ինչպես նաև առևտրի/սպասարկման կետերում գործարքներ կատարելու ընթացքում: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվեք միայն վստահելի կայքերից:

ե) Բանկոմատներով գործարքներ իրականացնելիս օգտվել ՎՏԲ-Հայաստան Բանկի բանկոմատներից: Հետևեք, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմեք Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ Ձեր ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց:

զ) Հետևել, որ POS-տերմինալներով անկանխիկ գործարքներ կատարելիս վճարումն իրականացվի Ձեր ներկայությամբ, և Քարտը դուրս չբերվի Ձեր տեսադաշտից: Նախքան վճարման անդորրագիր ստորագրելը, ստուգեք դրա վրա նշված վճարման ենթակա գումարը:

է) Օգտվել Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցումներ ստանալու Մեր SMS Banking ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անճշտություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը դադարեցնելու ուղղությամբ:

2.7 Դուք իրավունք ունեք դիմել Բանկին Ձեր քարտային հաշվին կից մեկ և ավելի լրացուցիչ քարտերի ստացման համար, որոնց թողարկման և սպասարկման սակագները սահմանվում են Բանկում գործող Պայմաններով: Լրացուցիչ քարտերը տրամադրվում են Ձեր կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Լրացուցիչ քարտերով կատարված բոլոր գործառնությունների համար Բանկի առջև պատասխանատվությունը անմիջականորեն կրում էք Դուք:

2.8 Սույնով տեղեկացնում ենք, որ Բանկը առանց Ձեզ նախապես տեղեկացնելու և առանց Ձեր լրացուցիչ համաձայնության իրավունք ունի փակել վարկային քարտն ու քարտային հաշիվները, եթե վերջին 12 ամսում Քարտով Ձեր կողմից և նախաձեռնությամբ (բացառությամբ Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքների) որևէ գործարք չի կատարվել և երբևէ չի օգտագործվել քարտին տրամադրված վարկային գիծը:

2.9 Սույնով Դուք հավաստիացնում եք, որ տեղեկացված եք, որ Բանկը Քարտի Սակագներով կարող է սահմանել Ձեզ հասանելի քարտերի առավելագույն քանակ՝ տեղեկատվությունը հասանելի է Բանկի պաշտոնական կայքում:

2.10 Եթե հիմնական քարտային հաշվի մնացորդը պակաս է, քան քարտի սպասարկման սակագինը, չբավարարող գումարը գանձվում է ՎՏԲ-Հայաստան Բանկում առկա Ձեր այլ հաշիվներից, իսկ արտարժույթային հաշիվների դեպքում՝ փոխանակելով տարադրամը ՀՀ դրամի՝ համաձայն գործարքի իրականացման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի:

2.11 Ինտերնետ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով «Բանկն օգտագործում է 3D-Secure/Secure Code ծառայությունը, որի համաձայն ինտերնետ միջավայրում՝ VBV/Secure code նշում ունեցող կայքերում, քարտով վճարում կատարելիս Դուք պետք է մուտքագրեք Ձեր կողմից քարտի տրամադրման պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ստացած մեկանգամյա գաղտնաբառը:

2.12 Մենք իրավունք ունենք մերժել ինտերնետ միջավայրում Ձեր քարտով իրականացվող վճարումը եթե Ձեր կողմից ստորագրված քարտի տրամադրման պայմանագրում նշված չէ կամ առանց Բանկին ծանուցման փոխվել է պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարը, որի

արդյունքում Ձեր բջջային հեռախոսահամարին չի ուղարկվում VBV/Secure code նշում ունեցող կայքերում վճարման իրականացման համար անհրաժեշտ մեկանգամյա գաղտնաբառը:

2.13 VBV/Secure code նշում չունեցող կայքերում չի բացառվում երրորդ անձանց կողմից Ձեր քարտի չլիազորված օգտագործման ռիսկը:

2.14 Քարտը **բանկոմատի կողմից առգրավվելու դեպքում**.

- Եթե քարտը առգրավվել է Բանկի մասնաճյուղի տարածքում տեղադրված բանկոմատի կողմից և մասնաճյուղի աշխատանքային ժամերին, ապա անհրաժեշտ է մոտենալ տվյալ մասնաճյուղի պատասխանատու աշխատակցին և տեղում ստանալ քարտը, եթե չկա քարտը Բանկի կողմից չտրամադրելու որևէ պատճառ:
- Եթե քարտը առգրավվել է Բանկի մասնաճյուղերի տարածքներից դուրս գտնվող Բանկի բանկոմատի կողմից կամ այլ բանկի բանկոմատի կողմից, ապա անձը հաստատող փաստաթղթով 10 աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է մոտենալ Բանկի “Պուշկին” մասնաճյուղ և ստանալ քարտը կամ այլ մասնաճյուղի տարածքում ստանալու համար կապ հաստատել Բանկի հետ, եթե չկա քարտը Բանկի կողմից չտրամադրելու որևէ պատճառ:
- Եթե քարտը բանկոմատի կողմից առգրավվելու օրվանից 180 օրվա ընթացքում Դուք չեք մոտենում քարտը ստանալու համար, ապա Բանկն իրավունքն ունի ոչնչացնել քարտը դրական մնացորդը փոխանցելով Ձեր Բանկում առկա այլ հաշիվներին կամ Բանկի տարանցիկ հաշվին, որը ստանալու համար կարող եք անձնագրով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ:

### **3. Քարտի վերաթողարկում**

**3.1** Բանկն իրավունք ունի քարտի ժամկետի ավարտին իրականացնել քարտի ավտոմատ վերաթողարկում՝ թողարկելով նոր քարտ PIN-ծածկագրի պահպանմամբ, եթե Ձեր կողմից քարտի ժամկետի ավարտից 40 օրացուցային օր առաջ Քարտի փակման (այդ թվում՝ առկայության դեպքում վարկային գծի փակման) դիմում չներկայացնելու դեպքում:

**3.2** Քարտի ժամկետի ավարտից հետո Բանկը իրավունք ունի ավտոմատ չվերաթողարկել վարկային քարտը, եթե առկա են միաժամանակ հետևյալ պայմանները՝

- վարկային գիծը փակ է,
- վերջին 6 ամսում Ձեր կողմից և նախաձեռնությամբ գործարք չի իրականացվել (Ձեր նախաձեռնությամբ կատարված գործարք չեն համարվում Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքները),
- քարտային հաշիվների գումարային դրական մնացորդը չի գերազանցում 10,000 ՀՀ դրամը:

**3.3** Քարտի ժամկետի ավարտից հետո Բանկը իրավունք ունի իրականացնել քարտային հաշիվների գործողության ժամկետի երկարաձգում առանց ֆիզիկապես պլաստիկ քարտի տրամադրման, եթե առկա են միաժամանակ հետևյալ պայմանները՝

- վարկային գիծը փակ է,
- վերջին 6 ամսում Ձեր կողմից և նախաձեռնությամբ վարկային քարտով կատարվել է առնվազն 1 գործարք (Ձեր նախաձեռնությամբ կատարված գործարք չեն համարվում Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքները),
- քարտային հաշիվների գումարային դրական մնացորդը չի գերազանցում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը:

### **4. Քարտային հաշիվ**

**4.1** Քարտի տրամադրման հետ մեկտեղ Բանկը Ձեր անունով բացում է քարտային հաշիվներ, որոնցով հաշվառվում են Ձեր Քարտով կատարված գործարքները, Բանկի Պայմաններով սահմանված գործարքներից բխող բոլոր տեսակի գանձումները, միջնորդավճարները, ինչպես նաև գանձվող տույժերն ու տուգանքները:

**4.2** Քարտով կատարված գործարքները, ինչպես նաև դրանցից բխող բոլոր տեսակի գանձումներն ու միջնորդավճարները քարտային հաշվին կարող են հաշվեգրվել գործարքի կատարման օրը կամ

ավելի ուշ՝ վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված ժամկետներին համապատասխան:

**4.3** Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքները հաշվառելիս Մենք կիրառում ենք գործարքի հաշվեգրման օրը Բանկի և համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված փոխարժեքները: Իսկ քարտային հաշվից գումարի փաստացի ելքագրումը (քարտային հաշվի քաղվածքում գործարքի արտացոլումը) կատարվում է գործարքի հաշվեգրման (հաշվեգրում է համարվում Բանկի կողմից գործարքի կատարման ամսաթիվը, ժամը) պահին Բանկում անկանխիկ գործարքների համար օրվա փակման ժամին գործող փոխարժեքով:

**4.4** Բազմարժույթային հաշիվներ ունեցող Քարտով գործարքների իրականացման դեպքում կատարված գործարքի արդյունքում Բանկի հաշվարկային օրվա փակման պահին գումարը ելքագրվում է Ձեր այն հաշվից, որի արժույթով կատարվել էր գործարքը:

**4.5** Կատարված գործարքի արժույթով հաշիվ չունենալու կամ տվյալ արժույթով հաշվի վրա բավարար միջոցների բացակայության դեպքում գործարքների հաշվեգրումն իրականացվում է Քարտի տրամադրման պայմանագրում նշված հաշիվների առաջնահերթությամբ (առաջնահերթ է համարվում պայմանագրում Ձեր կողմից նշված Քարտի արժույթը):

**4.6** Դուք Մեզ իրավունք եք տալիս անակցեպտ կարգով դրամական միջոցներ դուրս գրել Ձեր՝ Բանկում գործող քարտային հաշիվներից նաև հետևյալ դեպքերում՝

- Մեր կողմից Ձեր քարտային հաշվին սխալմամբ (այդ թվում ծրագրային սխալի պատճառով) միջոցների մուտքագրման դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերի և այլ պարտադիր վճարների կատարման նպատակով,
- Դատարանի վճռով, այդ թվում՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ ստանալու դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

**4.7** Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը և պարտավորվում եք, Մեր կողմից ծրագրային սխալի կամ այլ պատճառով Ձեր քարտային հաշվին սխալմամբ մուտքագրված և օգտագործված դրամական միջոցները վերադարձնել հետ, ինչպես նաև Դուք համարվում եք տեղեկացված, որ սխալմամբ մուտքագրված և Ձեզ չպատկանող դրամական միջոցները օգտագործելու դեպքում օգտագործված դրամական միջոցների նկատմամբ կհաշվարկվի Բանկում գործող պայմաններով նախատեսված տոկոսադրույք:

**4.8** Բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարը Ձեր քարտային հաշվին կրեդիտագրվելու մասին Բանկը Ձեզ կտեղեկացնի Ձեր կողմից ընտրված Բանկի հետ հաղորդակցման Եղանակով քաղվածքի տրամադրման միջոցով՝ քաղվածքի տրամադրման պայմանների նժամկետների համաձայն:

**4.9** Ի օգուտ Ձեր բանկային/քարտային հաշվին Բանկում միջթանկային կամ միջազգային փոխանցումների առկայության պարագայում Բանկի պարտավորությունն է հանդիսանում նշված դրամական միջոցների կրեդիտագրումը Ձեր հաշվին, իսկ նպատակ դաշտում նկարագրված այլ գործողությունների (այդ թվում՝ վարկի վաղաժամկետ մարում կամ տոկոսի մարում) իրականացման համար անհրաժեշտ է Ձեր (կամ Ձեր օրինական ներկայացուցչի կողմից) նախընտրած եղանակով ներկայացնել ՎՏԲ- Հայաստան Բանկ ՓԲԸ-ին ուղղված համապատասխան հանձնարարական:

## **5. Քաղվածքներ**

5.1. Բանկը առնվազն օրենքով նախատեսված պարբերականությամբ, Բանկի հետ հաղորդակցման Ձեր կողմից ընտրված տարբերակով, կտրամադրի Քարտային հաշվի քաղվածք, որը կարտացոլի հաշվետու ժամանաշրջանի ընթացքում Ձեր քարտային հաշվով կատարված բոլոր գործարքները: Բանկը կարող է չտրամադրել քաղվածք, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ձեր

քարտային հաշվով որևէ շարժ չի կատարվել: Այն պարագայում, երբ Քարտին առկա է տրամադրված վարկ, Ձեզ կտրամադրվի քարտային և վարկային հաշիվների մեկ միասնական քաղվածք և այս դեպքում քաղվածքը տրամադրվում է՝ անկախ հաշվով որևէ շարժի առկայության: Խնդրում ենք համեմատել գործարքները հավաստող պահպանված վճարային անդորագրերի տվյալները քաղվածքում արտացոլված գործարքների մանրամասների հետ: Անհամապատասխանությունների առկայության դեպքում՝ Դուք պարտավոր եք քաղվածքում նշված ժամկետի ընթացքում գրավոր տեղեկացնել Բանկին այդ մասին՝ ներկայացնելով գործարքի բողոքարկման դիմում՝ ըստ Բանկի սահմանած ձևի:

Վճարահաշվարկային համակարգերով կատարված չվավերացված գործարքների մասով, քաղվածը ստանալու պահից առնվազն 15 օրացուցային օրվա ընթացքում (պահանջը ներկայացնելու անհնարիությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում քաղվածքը ստանալու պահից 55 (հիսունհինգ) օրվա ընթացքում) Դուք հնարավորություն ունեք անհամապատասխանությունների մասին դիմում-պահանջ ներկայացնել Բանկին սահմանած ձևին համապատասխան: Նշված ժամկետներում գրավոր դիմում-պահանջ չներկայացնելու դեպքում Բանկն իրավունք ունի մերժել ներկայացված խնդրանքը՝ հիմք ընդունելով վճարահաշվարկային համակարգերի կանոնները, ԿԲ համապատասխան նորմատիվ ակտերը: Սույն կետը որևէ կերպ չի սահմանափակում Ձեր իրավունքը ճշտությունը վիճարկելու համար:

**5.2** Արտոնյալ ժամանակահատված ունեցող Քարտի վարկային սահմանաչափի օգտագործված մասը ենթակա է մարման (վճարման) քաղվածքի ձևավորման օրվան հաջորդող օրվանից՝ համապատասխան քարտի տեսակի համար սահմանված արտոնյալ ժամանակահատված ընթացքում՝ քաղվածքի ձևավորման օրվանից Visa Classic և Mastercard Standard Քարտերի դեպքում՝ 15 օրացուցային, Visa Gold, MasterCard Gold և Visa Gold Քարտերի դեպքում՝ 20 օրացուցային, Visa Platinum, Visa Infinite, Mastercard World Black Edition Քարտի դեպքում՝ 25 օրացուցային օրվա ընթացքում, որի վերջնաժամկետը նշվում է Ձեր քաղվածքում:

## **6. Քարտի վարկային սահմանաչափը և տարեկան փաստացի տոկոսադրույքը**

**6.1** Քարտը Մեր կողմից տրամադրվում է վերականգնվող վարկային սահմանաչափով (Դուք կարող եք մարել Ձեր օգտագործված սահմանաչափը, այնուհետև նորից օգտագործել այն):

**6.2** Եթե Դուք ընտրել եք արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտ, ապա վարկային սահմանաչափի օգտագործված մասը (ամբողջը կամ մի մասը) ենթակա է մարման ոչ շուտ, քան արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում (սկսած քաղվածքի ձևավորման օրվան հաջորդող օրվանից մինչև քաղվածքում նշված արտոնյալ ժամանակահատվածի վերջին օրը ներառյալ): Յուրաքանչյուր քարտի համար արտոնյալ ժամանակահատվածի տևողությունը նշված է Բանկի Պայմաններում: Բանկի պայմանները նախատեսում են նախորդ ամսվա ընթացքում (նախորդ քաղվածքում նշված ժամանակահատվածում) օգտագործված սահմանաչափի՝ պարտադիր մարման ենթակա նվազագույն գումար, որը Դուք պետք է վճարեք մինչև քաղվածքում նշված արտոնյալ ժամանակահատվածի վերջին օրվա գործառնական օրվա ավարտը ներառյալ, այլապես Ձեզանից կգանձվի Պայմաններով նախատեսված վճարման ենթակա նվազագույն գումարի չվճարման տուգանքը, ինչպես նաև Բանկին իրավունք կվերապահվի դիմել դատարան և պահանջել պարտքի մարում: Արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում քաղվածքում նշված օգտագործված գումարն ամբողջությամբ մարելու դեպքում Ձեզանից վարկի օգտագործման դիմաց տոկոսներ չեն գանձվի, եթե այլ բան սահմանված չէ Պայմաններով: Դուք պետք է ուշադիր լինեք արտոնյալ ժամանակահատվածում մարումներ կատարելիս, մինչև մարում կատարելը տեղեկացե՛ք քաղվածքի ձևավորված լինելու մասին:

**6.3** Եթե Դուք ընտրել եք առանց արտոնյալ ժամանակահատվածի վարկային քարտ (ընդ որում՝ Դուք կարող եք ստանալ այն թե՛ Ձեր դեբետային քարտին, և թե՛ վարկային քարտին), այդ դեպքում Բանկի Մակագները նախատեսում են օգտագործված սահմանաչափի նվազագույն գումար՝ ներառյալ հաշվեգրված տոկոսագումարը, որը Դուք պետք է վճարեք յուրաքանչյուր ամսվա վերջում՝ քաղվածքում նշված օրը, այլապես Ձեզանից կգանձվի Պայմաններով նախատեսված

վճարման ենթակա նվազագույն գումարի չվճարման տուգանք:

**6.4** Ձևավորված պարտքի ոչ ամբողջական մարման դեպքում չմարված մասի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ (սկսած Նախորդ ամսվա ընթացքում չմարված առաջին իսկ գործարքի օրվանից՝ տարին հաշվարկելով 365 օր), որոնք հաշվեգրվում են որպես առանձին գործարք՝ ավելանալով գործող սահմանաչափին (կապիտալացվում են): Ընդ որում, տոկոսներն ամբողջ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվարկվում են հաշվեգրման օրվա դրությամբ գործող տոկոսադրույքով:

**6.5** Մենք կարող ենք միակողմանիորեն փոփոխել վարկի տարեկան անվանական տոկոսադրույքի չափը՝ նախապես ծանուցելով Ձեզ այդ մասին սույն Կանոններով սահմանված կարգով:

**6.6** Ձեր վարկային սահմանաչափի տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կսահմանվի Ձեր պայմանագրում, որի չափը ենթակա է փոփոխության՝ կախված վարկի փաստացի տրամադրման օրվանից:

**6.7** Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը հաշվարկվում է ելնելով հետևյալ սկզբունքներից.  
ա) Ձեր վարկային սահմանաչափի գործողության ժամկետը՝ համաձայն Ձեր պայմանագրում նշված ժամկետի,

բ) սահմանաչափն ամբողջությամբ օգտագործվում է տրամադրման հաջորդ օրը,

գ) ամսվա վերջին աշխատանքային օրը վարկային սահմանաչափից մարվում են հաշվարկված տոկոսները, իսկ վարկն ամբողջությամբ մարվում է ժամկետի վերջում:

**6.8** Քարտային հաշվից նույն օրվա ընթացքում միննույն գումարի չափով ելքային, այնուհետև մուտքային գործարք իրականացնելու դեպքում վարկային գծի մարում (բացասական մնացորդի համալրում) կատարվում է միայն ելքային գործարքից հետո մուտքագրված գումարը մեկ աշխատանքային օր քարտային հաշվին մնալու պարագայում: Եթե մուտքային գործարքի գումարը գերազանցում է ելքային գործարքի գումարը, գործարքների օրվա դրությամբ կատարվում է վարկային սահմանաչափի մարում գումարի տարբերության չափով, իսկ մնացած մուտքագրված գումարի մարումը տեղի է ունենում գումարը քարտային հաշվին մեկ աշխատանքային օր մնալու դեպքում:

## **7 Քարտի կորուստը**

**7.1** Քարտի կորստի կամ հափշտակության մասին Դուք պետք է անհապաղ տեղեկացնեք Մեզ հետևյալ եղանակներով.

ա) զանգահարելով Բանկի (+37410) 56-07-08 կամ 87-87 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնելով Ձեր Պայմանագրում նշված գաղտնաբառը (սա PIN ծածկագիրը չէ): Մենք կարող ենք պահանջել Ձեր բանավոր կարգադրության գրավոր հաստատում՝ նախքան Քարտն արգելափակելը: Բանավոր դիմումի ստացումից և Ձեր ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է Ձեր կողմից նշված և սակագներով սահմանված տարբերակով:

բ) Բանկի ցանկացած մասնաճյուղ ներկայանալուց և Ձեր անձը հաստատելուց հետո Ձեր Քարտն արգելափակվում է 30 րոպեի ընթացքում:

**7.2** Արգելափակումից հետո Ձեր Քարտը հայտնաբերելու դեպքում Դուք պետք է տեղեկացնեք Մեզ այդ մասին: Քարտի գործողությունը կարող է վերականգնվել արգելափակումից հանելուց հետո (առկայության դեպքում):

## **8 Քարտերով կատարվող գործարքների օրինականությունն ու գաղտնիությունը**

**8.1** Քարտը չի կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարտային գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Մենք իրավունք ունենք առանց Ձեզ ծանուցելու չկատարել գործարքը և/կամ արգելափակել Քարտը: Մենք կարող ենք նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել նախքան գործարքի կատարումը:

**8.2** Մենք կարող ենք չկատարել գործարքները և/կամ արգելափակել Քարտը, եթե քարտային գործարքը կապված է հանրության կարգերին ու բարոյականությանը հակասող գործարքների հետ



(օրինակ՝ ինտերնետային մոլախաղեր, բացահայտ անպատշաճ բովանդակություն ունեցող առարկաների, նյութերի ձեռքբերում, վաճառք նայլն):

Քարտի լոգոտիպի արտացոլումը գործարքների կատարման վայրերում, ներառյալ ինտերնետային կայքերը, չի նշանակում, որ գործարքն օրինական է:

**8.3** Մենք պարտավոր ենք չհրապարակել և երրորդ անձանց չտրամադրել Ձեր վերաբերյալ Մեզ հայտնի դարձած և բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները: Սյոուհանդերձ, Մենք իրավունք ունենք նման տեղեկություններ հաղորդել վճարահաշվարկային համակարգերի հեռախոսավարներին, պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկին և Բանկի այլ գործընկերներին:

**8.4** Մենք հնարավորություն ենք ընձեռում Մեր քարտապաններին ստանալու իրենց Քարտերին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS հաղորդագրություններ՝ այդպիսով հնարավորինս կանխելով Քարտերի չլիազորված օգտագործումը: Վերոնշյալ SMS հաղորդագրությունը ստանալուն պես Դուք պետք է հավաստիանաք, որ գործարքը կատարվել է Ձեր կամ Ձեր կողմից լիազորված անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ: Քարտի չլիազորված օգտագործման դեպքում քարտապանը պարտավոր է տեղեկացնել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին՝ զանգահարելով հետևյալ շուրջօրյա հեռախոսահամարով՝ (+37410) 56-07-08: Չլիազորված օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում Ձեր Քարտը շտապ կարգելափակվի և Մենք Ձեր բողոքարկման դիմումի հիման վրա կուսումնասիրենք գործարքի մանրամասները և անհրաժեշտության դեպքում կսկսենք գործարքի բողոքարկման գործընթացը:

**8.5** Ընդ որում, քարտով իրականացված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ստացման ծառայությունն ակտիվացրած հաճախորդների կողմից SMS հաղորդագրություն չստանալու պարագայում Բանկը չի կրում պատասխանատվություն, եթե այն ուղարկվել է Բանկի կողմից, սակայն չի հասել հասցեատիրոջը՝

- օպերատորի կողմից տեխնիկական թերության կամ այլ պատճառով,
- հաճախորդի կողմից հեռախոսահամարը փոխելու և Բանկին այդ մասին չտեղեկացնելու պատճառով:

## **9 Ձեր և Բանկի հաղորդակցումը**

**9.1** Եթե Ձեր և Մեր միջև հաղորդակցումն իրականացվում է փոստային կապի միջոցով, Բանկը պատասխանատվություն չի կրում փաստաթղթերի հանձնման ուշացման կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման համար:

**9.2** Մենք իրավունք ունենք ձայնագրել Ձեր և Մեր բանավոր հաղորդակցույթ-յունը՝ ներառյալ հեռախոսային խոսակցությունները: Կատարված ձայնագրությունները ծառայում են ապացույց հնարավոր տարաձայնությունների կարգավորման ժամանակ, այդ թվում դատական գործընթացների ժամանակ:

**9.3** Ձեր վարկունակությունը ստուգելու և վերահսկելու համար Մեր իրավասու աշխատակիցներն իրավունք ունեն շարունակական հսկողություն իրականացնել Ձեր ֆինանսական վիճակի նկատմամբ և պահանջել ցանկացած տեղեկատվություն: Դուք պարտավորվում եք անհապաղ տրամադրել պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները:

## **10 Ձեր և Բանկի պատասխանատվությունը**

**10.1** Ձեր Քարտի սպասարկումը ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի միջոցների կիրառում և երրորդ անձանց ծառայությունների օգտագործում: Դուք ընդունում եք, որ Բանկը չի կարող պատասխանատվություն կրել Ձեր Քարտով իրականացվող գործառնությունների հետևանքով Ձեր կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասներն առաջացել են Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով:

**10.2** Մենք և Դուք կազատվենք միմյանց առաջ ստանձնած պարտավորությունների խախտման համար սահմանված պատասխանատվությունից, եթե խախտումն արդյունք է կապի ընդհատումների, էլեկտրամատակարարման դադարեցման, պետական մարմինների ակտերի, քաղաքացիական հուզումների, երկրաշարժի, հեղեղների և տվյալ պայմաններում արտակարգ



անկանխելի այլ հանգամանքների ազդեցության:

### ***11 Վեճերի և տարաձայնությունների լուծումը***

**11.1** Քարտերի տրամադրման և սպասարկման կապակցությամբ Ձեր և Մեր ցանկացած տարաձայնություն ենթակա է լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**11.2 Հայտարարություն:** Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

**Հայտարարություն:** Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

### ***12 Այլ պայմաններ***

**12.1** Ձեր և Մեր միջև կնքված գրավոր համաձայնությամբ կարող են սահմանվել պայմաններ, որոնք կնախատեսեն այլ բան, քան սույն Պայմանները: Այդ դեպքում կգերակայի Ձեր և Մեր միջև կնքված լրացուցիչ համաձայնագիրը:

**12.2** Մենք իրավունք ունենք գրավադրել, ինչպես նաև այլ անձանց փոխանցել Քարտերի հետ կապված Մեր բոլոր իրավունքներն առանց Ձեր համաձայնության: Այդ դեպքերում Մենք պարտավորվում ենք Ձեզ գերծ պահել հնարավոր բոլոր վնասներից և ծախսերից:

**12.3** Սույն Կանոններն ու Պայմանները ներառում են Մեր կողմից սահմանված դրույթները, որոնք կարգավորում են Քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված հարաբերությունները: Այդուհանդերձ, VISA, Mastercard և այլ վճարահաշվարկային կազմակերպություններն ու համակարգերը կարող են ունենալ Քարտի կոնկրետ տեսակներով գործարքների իրականացման հատուկ սահմանաչափեր և այլ կանոններ, որոնք նույնպես ենթակա են պահպանման Ձեր և Բանկի կողմից:

**12.4** Մենք իրավունք ունենք Ձեր վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի Վարկային ռեգիստր՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի:

### Վարկային քարտի օգտագործման ուղեցույց և օրինակներ

Դիտարկենք վճարման արտոնյալ ժամանակահատվածով վարկային քարտերի օգտագործման և սպասարկման մի քանի օրինակներ: Նախ տեսնենք, թե ինչպես է գործում արտոնյալ ժամանակահատվածը:

**Օրինակ 1.** Ենթադրենք՝ Վարկային քարտի քաղվածքը ձևավորվել է 20.04.2020թ.-ին: Հաճախորդն օգտագործել է ամբողջ վարկային սահմանաչափը քաղվածքի ձևավորման հաջորդ օրը՝ 21.04.2020թ.-ին: Վարկային սահմանաչափի օգտագործմանը հաջորդող հերթական քաղվածքի ձևավորման օրը 20.05.2020թ.-ն է:

**Տարբերակ 1.** Տվյալ քարտատեսակի համար սահմանված արտոնյալ ժամանակահատվածը կազմում է 15 օր:

Ստացվում է, որ Դուք ունեք 45-օրյա ժամկետ վարկային միջոցներից անվճար օգտվելու համար (10 օր մինչև ապրիլ ամսվա ավարտը + 20 օր մինչև քաղվածքի ձևավորման օրը + 15 օր մինչև արտոնյալ ժամանակահատվածի ավարտը):

**Օրինակ 2.** Ենթադրենք՝ հաճախորդն օգտագործում է վարկային սահմանաչափը 12.03.2020թ.-ին 1000 միավորի չափով, և ստացված քարտատեսակի համար օգտագործված սահմանաչափի մարման համար նախատեսված արտոնյալ ժամանակահատվածը կազմում է 15 օր՝ սկսած քաղվածքի ձևավորման օրվանից:

Քանի որ գումարի օգտագործմանը հաջորդող հերթական քաղվածքի ձևավորման օրը, որտեղ կարտացույլի օգտագործված գումարը, համարվում է 20.03.2020թ.-ը, ուստի 20.03.2020թ.-ին ստանալով քաղվածքը՝ Դուք կտեսնեք.

12.03.2020թ. Ձեր կողմից վարկային սահմանաչափի օգտագործումն արտացույլվել է տվյալ քաղվածքում:

21.02.2020թ.-ից մինչև 20.03.2020թ. ընկած ժամանակահատվածում օգտագործված վարկային միջոցների (այդ թվում 12.03.2020թ.-ին օգտագործված 1000 միավորի) համալրման համար Դուք ունեք ժամկետ մինչև 06.04.2020թ.

20.03.2020թ.-ից մինչև 06.04.2020թ. Դուք պետք է կատարեք Ձեր վարկային քարտի համալրում՝ քաղվածքում նշված օգտագործված հատվածի մարման ենթակա նվազագույն գումարի չափով:

Քարտային հաշվի քաղվածք	
Քարտի տեսակ	VISA CLASSIC
Վարկային սահմանաչափի տեսակ	***
Հավելյալ քարտի տեսակ	***
Քարտի համար	***
Հավելյալ քարտի համար	***
Հաշվեհամար 33 դրամ	***
Հաշվեհամար ԱՄՆ դոլար	***
Հաշվեհամար ԵՎՐՈ	***
Հաշվեհամար ՌԴ ռուբլի	***
Քարտի գործողության ժամկետ	31-08-2021
Հավելյալ քարտի գործողության ժամկետ	***
Քաղվածքի ամսաթիվ	20/03/2020
Քարտային հաշվի քաղվածքի N	200320
Հաշվետու ժամանակահատված	21/02/2020-20/03/2020
Նախորդ քաղվածքի ամսաթիվը	20/02/2020

Տեղեկատվական մաս				
	AMD	USD	EUR	RUB
Տարեկան պարզ տոկոսադրույք և տոկոսային եկամտա երրորդուն %	0.00	0.00	0.00	0.00
Քարտային հաշվի գերաժախսի նկատմամբ կիրառվող տույժ	20% նվազագույնը 500 AMD առավելագույնը 10.000 AMD			
Օրական ժամկետանցի տույժ *	0.00			
Վարկային սահմանաչափի նվազագույն գումարի չվճարման տուգանք**	5.000			

Գործարքներ										Օրվա Վերցնական Մնացորդ			
Գործարքի ամսաթիվ	Քաշված գումարի ամսաթիվ	Գործարքի նկարագրություն	Գործարքի արժույթ	Գործարքի գումար	Քաշված գումարի արժույթ	Քաշված գումարի ամսաթիվ****	Միջնորդավճար ԳԳ դրամով	Տեսակ	AMD	USD	EUR	RUB	
<b>Սկզբնական մնացորդ առ 21/02/2020</b>										0.00	0.00	0.00	0.00
12/03/2020	12/03/2020	ATM VTB 082 T. MECI 48141 YEREVAN ARM	AMD	1,000	AMD	1,000		DB	-1.000 <sup>1</sup>	0.00	0.00	0.00	

Գործարքներ										Օրվա Վերցնական Մնացորդ			
Գործարքի ամսաթիվ	Քաշված գումարի ամսաթիվ	Գործարքի նկարագրություն	Գործարքի արժույթ	Գործարքի գումար	Քաշված գումարի արժույթ	Քաշված գումարի ամսաթիվ****	Միջնորդավճար ԳԳ դրամով	Տեսակ	AMD	USD	EUR	RUB	
<b>Վերցնական մնացորդ առ 20/03/2020</b>										-1.000	0.00	0.00	0.00

Տեղեկատվություն Օվերդրաֆտի/Վարկային սահմանաչափի վերաբերյալ	
Վարկային սահմանաչափ	200,000
Վարկային սահմանաչափի արժույթ	AMD
Վարկային սահմանաչափի տրամադրված ամսաթիվ	31-08-2019
Վարկային սահմանաչափի մարման վերջնական ամսաթիվ	31-08-2021
Վարկային սահմանաչափի տարեկան տոկոսադրույք	20%
Ընդհանուր պարտավորություններ քաղկածի տրամադրված ամսաթվի դրությամբ (ճեղատյալ տոկոսագումար, տույժեր, տուգանքներ)****, որից	1,005
Քաշվելոված տոկոսագումար	0.0
Վարկի սպասարկման ամսական միջնորդավճար	0.0
Վարկի սպասարկման տարեկան միջնորդավճար	0.0
Քաղաքային հաշվի գեղանկալի տույժ	0.0
Վարկային սահմանաչափի ժամկետանց մասի տույժեր, տուգանքներ	0.0
Վարկային սահմանաչափի նվազագույն գումարի յմնարման տուգանք	0.0
Քարտի ամսական սպասարկման վարձ (ԳԳ դրամ)*****	5.00 <sup>2</sup>
Քարտի տարեկան սպասարկման վարձ (ԳԳ դրամ)*****	-
Վարկային սահմանաչափի գեղանկալ	-
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումար	100 <sup>3</sup>
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումարի մարման վերջնական արտոնյալ ժամանակահատվածի վերջնական ամսաթիվ	06-04-2020 <sup>4</sup>

- <sup>1</sup> Ձեր կողմից օգտագործված վարկային սահմանաչափի մեծությունը՝ 1.000 միավորի չափով:
- <sup>2</sup> Գանձումների համար նախատեսված հատվածում ամսական սպասարկման վարձ՝ 5 միավորի չափով:
- <sup>3</sup> Արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում օգտագործված վարկային սահմանաչափի պարտադիր մարման ենթակա նվազագույն վճար՝ 105 միավոր (վարկային սահմանաչափի օգտագործված մաս\* նվազագույն վճարի չափ) + ամսական սպասարկման վճար=(1 000\*10%)+5=100+5=105:
- <sup>4</sup> Արտոնյալ ժամանակահատվածի վերջնաժամկետ՝ 06.04.2020թ. (20.03.2020թ. + 15 օրացուցային օր, իսկ քանի որ 04.04.2020թ. ոչ աշխատանքային օր է, ապա արտոնյալ ժամանակահատվածի ավարտը կլինի 06.04.2020թ.):
- <sup>5</sup> Ձեր կողմից կատարված դրամային մուտք՝ օգտագործված վարկային սահմանաչափի 1000 միավոր + 5 (ամսական սպասարկման վճար):
- <sup>6</sup> Տոկոսագումար չի գանձվում:

Այն դեպքում, Եթե մինչև արտոնյալ ժամանակահատվածի ավարտը՝ 06.04.2020թ. Ձեր կողմից **Տարբերակ 1.** 30.03.2020թ.-ին կատարվի 1000 միավոր ամբողջական մարում, ինչպես նաև 5 միավոր ամսական սպասարկման միջնորդավճարի վճարում, ապա Ձեր հաշվից որևէ տոկոսագումար չի գանձվի և 20.04.2020թ.-ին ստանալով հերթական քաղվածքը Դուք կտեսնեք.

Գործարքներ									Օրվա Վերջնական մնացորդ			
Գործարքի ամսաթիվ	Չափված ամսաթիվ	Գործարքի նկարագրություն	Գործարքի արժույթ	Գործարքի գումար	Չափված գումար	Չափված գումար***	Միջնորդավորողի դրամով	Տեսակ	AMD	USD	EUR	RUB
<b>Սկզբնական մնացորդ առ 21/03/2020</b>									-1.000	0.00	0.00	0.00
30/03/2020	30/03/2020	Պրամային մուտք	AMD	1.005	AMD	1.005*		CR	0.00	0.00	0.00	0.00
20/04/2020	20/04/2020	Տոկոսագումար	AMD	0.00	AMD			DB	0.00	0.00	0.00	0.00
<b>Վերջնական մնացորդ առ 20/04/2020</b>									0.00	0.00	0.00	0.00
<b>Տեղեկատվություն Օվերդրաֆտի/Վարկային սահմանաչափի վերաբերյալ</b>												
Վարկային սահմանաչափ									200.000			
Վարկային սահմանաչափի արժույթ									AMD			
Վարկային սահմանաչափի տրման ամսաթիվ									31-08-2019			
Վարկային սահմանաչափի մարման վերջնաժամկետ									31-08-2021			
Վարկային սահմանաչափի տարեկան տոկոսադրույք									20%			
Ընդհանուր պարտավորությունները քաղվածքի տրման ամսաթվի դրությամբ (մեծությամբ տոկոսագումարը, տույժերը, տուգանքները)****, ուրիշ									5.00			
Չափված գումար տոկոսագումար									0.00*			
Վարկի սպասարկման ամսական միջնորդավճար									0.0			
Վարկի սպասարկման տարեկան միջնորդավճար									0.0			
Քարտային հաշվի գեղածախսի տույժ									0.0			
Վարկային սահմանաչափի ժամկետանց մասի տույժեր, տուգանքներ									0.0			
Վարկային սահմանաչափի նվազագույն գումարի յվճարման տուգանք									0.0			
Քարտի ամսական սպասարկման վարձ (ՀՀ դրամ)*****									5.00			
Քարտի տարեկան սպասարկման վարձ (ՀՀ դրամ)*****									-			
Վարկային սահմանաչափի գերածախս									-			
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումար									5.00			
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումարի մարման վերջնաժամկետ /արտոմյալ ժամանակահատվածի վերջնաժամկետ/									05-05-2020			

**Տարբերակ 2.** Եթե 27.03.2020թ.-ին մարվի միայն վճարման Ենթակա պարտադիր նվազագույն վճարը (օգտագործված վարկային սահմանաչափի 10%-ը) 100 միավոր և 5 միավոր ամսական սպասարկման միջնորդավճարը, ապա հաջորդ քաղվածքում՝ 20.04.2020թ.-ին կարտացուլի օգտագործված վարկային սահմանաչափի վրա **հաշվեգրված տոկոսագումարը՝** հաշվարկելով հետևյալ կերպ՝

$$((\text{Օրվա վերջնական մնացորդ} * \text{տարեկան տոկոսադրույք})/365) * T = ((895 * 20\%) / 365 * 40) = 19.6:$$

Որտեղ՝  
**Օրվա վերջնական մնացորդը կազմում է՝** (օգտագործված վարկային սահմանաչափի - կատարված վճարում - ամսական սպասարկման վարձ) = 1000 - 100 - 5 = 895:

Տարեկան տոկոսադրույքը - 20%,  
 365 - տարվա մեջ օրերի քանակ,  
 T - վարկային սահմանաչափի օգտագործված օրվանից մինչև քաղվածքի ձևավորման օրն ընկած օրերի քանակը - 40:

Այդ պարագայում վարկային սահմանաչափի օգտագործված մասից մարման ենթակա նվազագույն գումարը կկազմի՝  
 (Վարկի օգտագործված մաս \* պարտադիր նվազագույն վճարի դրույք) + ամսական սպասարկման վարձ = (914.6 \* 10%) + 5 = 96.5

Որտեղ՝  
 Վարկի օգտագործված **մասը կազմում է՝**  
 (Օրվա վերջնական մնացորդ + վարկային սահմանաչափի վրա հաշվեգրված գումար) = 895 + 19.6 = 914.6:

Այսպիսով՝ 20.04.2020թ.-ին ստանալով քաղվածքը՝ Դուք կտեսնեք.

Գործարքներ										Օրվա Վերջնական Մնացորդ			
Սկզբնական մնացորդ առ 21/03/2020										-1.000	0.00	0.00	0.00
27/03/2020	27/03/2020	Ղրամային մուտք	AMD	105	AMD	105 <sup>7</sup>		CR	-895.00	0.00	0.00	0.00	
20/04/2020	20/04/2020	Տոկոսագումար	AMD	19.60	AMD	19.60 <sup>8</sup>		DB	-914.60	0.00	0.00	0.00	
Վերջնական մնացորդ առ 20/04/2020										-914.60	0.00	0.00	0.00
Տեղեկատվություն Օվերդրաֆտի/Վարկային սահմանաչափի վերաբերյալ													
Վարկային սահմանաչափ										200.000			
Վարկային սահմանաչափի արժույթ										AMD			
Վարկային սահմանաչափի տրման ամսաթիվ										31-08-2019			
Վարկային սահմանաչափի մարման մեթոդաբանություն										31-08-2021			
Վարկային սահմանաչափի տարեկան տոկոսադրույթ										20%			
Ընդհանուր պարտավորությունները բաղկածի տրման ամսաթվի դրությամբ (ներառյալ տոկոսագումարը, տույժերը, տուգանքները)****, որից										919.60			
Հաշվեզրված տոկոսագումար										19.60 <sup>9</sup>			
Վարկի սպասարկման անսակն միջնորդավճար										0.0			
Վարկի սպասարկման տարեկան միջնորդավճար										0.0			
Քարտային հաշվի գերաժախտի տույժ										0.0			
Վարկային սահմանաչափի ժամկետանց մասի տույժեր, տուգանքներ										0.0			
Վարկային սահմանաչափի նվազագույն գումարի չվճարման տուգանք										0.0			
Քարտի անսակն սպասարկման վառն (ԳԳ դրամ)****										5.00			
Քարտի տարեկան սպասարկման վառն (ԳԳ դրամ)****										-			
Վարկային սահմանաչափի գերաժախտ										-			
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումար										96.50 <sup>9</sup>			
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումարի մարման վերջնաժամկետ /արտոնյալ ժամանակահատվածի վերջնաժամկետ/										05-05-2020			

<sup>7</sup> Չեր կողմից կատարված դրամային մուտք՝ 100 (նվազագույն գումար) + 5 (ամսական սպասարկման վճար):

<sup>8</sup> Օգտագործված և չվարված վարկային սահմանաչափի վրա հաշվարկված տոկոսագումար, որն ավելանում է վարկային սահմանաչափին:

<sup>9</sup> Մարման ենթակա նվազագույն գումար (նվազագույն գումար, որը պետք է վճարեք արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում):

**Տարբերակ 3.** Եթե մարում չի կատարվում անգամ պարտադիր նվազագույն վճարի չափով (օգտագործված վարկային սահմանաչափի 10%-ի չափով), ապա, Պայմանների համաձայն, Ձեզանից կգանձվի տուգանք: Հաջորդ քաղվածքում՝ 20.04.2020թ.-ին, կարտացույլի ամբողջ պարտքի գումարը՝ ներառյալ օգտագործված վարկային սահմանաչափի վրա հաշվեգրված տոկոսագումարը/սկսած վարկի օգտագործման օրվանից մինչև քաղվածքի ձևավորման օրը, որը կազմում է 40 օր/, ինչպես նաև Պայմաններով նախատեսված տուգանքի գումարը: Այդ պարագայում գումարը, որն ավելանալու է վարկային սահմանաչափին կկազմի՝

((Օգտագործված գումար\*տարեկան տոկոսադրույթ)/365)\*T+ամսական սպասարկման վարձ+տուգանք=((1000\*20%)/365)\*40+5+50=76.90

Այս պարագայում պարտավորությունների ընդհանուր գումարը կկազմի՝

(Վարկի օգտագործված մաս + պարտադիր նվազագույն վճարի դրույթ) + ամսական սպասարկման վարձ = (1000+76.9)+5=1081.9, իսկ հաշվեգրված տոկոսագումարը՝((Օրվա վերջնական մնացորդ\*տարեկան տոկոսադրույթ) /365)\*T=((1000\*20%)/365\*40=21.90:

Տեղեկատվություն Օվերդրաֆտի/Վարկային սահմանաչափի վերաբերյալ	
Վարկային սահմանաչափ	200,000
Վարկային սահմանաչափի աբոնյա	AMD
Վարկային սահմանաչափի տրման ամսաթիվ	31-08-2019
Վարկային սահմանաչափի մարման վերջնաժամկետ	31-08-2021
Վարկային սահմանաչափի տարեկան տոկոսադրույք	20%
Օրնիստոր պարտավորությունները քաղվածքի տրման ամսաթվի դրությամբ (ներառյալ տոկոսագումարը, տուժերը, տուգանքները)**** որից	-1,081.90**
Հաշվեզրված տոկոսագումար	21.90**
Վարկի սպասարկման ամսական միջոցառումներ	0.0
Վարկի սպասարկման տարեկան միջոցառումներ	0.0
Քարտային հաշվի գերաժանյալի տույժ	0.0
Վարկային սահմանաչափի ժամկետանց մասի տուժեր, տուգանքներ	0.0
Վարկային սահմանաչափի նվազագույն գումարի չվճարման տուգանք	50.00**
Քարտի ամսական սպասարկման վարձ (ՀԳ դրամ)*****	10.00**
Քարտի տարեկան սպասարկման վարձ (ՀԳ դրամ)*****	-
Վարկային սահմանաչափի գերաժանյալ	-
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումար	181.90**
Վարկային սահմանաչափի օգտագործված մասի մարման ենթակա նվազագույն գումարի մարման վերջնաժամկետ հարստնյալ ժամանակահատվածի վերջնաժամկետ	05-05-2020

<sup>10</sup> Ձեր պարտավորությունների ընդհանուր գումար:

<sup>11</sup> Օգտագործված և չմարված վարկային սահմանաչափի վրա հաշվարկված տոկոսագումար, որն ավելանում է վարկային սահմանաչափին:

<sup>12</sup> Գանձվող տուգանքի չափ:

<sup>13</sup> Երկու ամսվա համար կուտակված քարտի սպասարկման վարձ:

<sup>14</sup> Մարման ենթակա նվազագույն գումար (նվազագույն գումար, որը պետք է վճարեք արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում):